

Միջազգային Մարդաբանութեան օր

Միջազգային Մարդաբանութեան օր

1

“Տէրոց խօսքը, որ Յուղայի թագաւորներուն՝ Յովաթամի, Աքազի **ու** Եղեկիայի օրերը՝ Մորստացի Միքիայի բուղուեցաւ, եւ ‘իրեն տեսիլքով հաղորդուեցաւ’ Սամարիայի ու Երուսաղէմի մասին.

ՈՂԲ ՄԸ ՍԱՄԱՐԻԱՅԻ ՈՒ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԱՍԻՆ

- 2** «Լսեցէ՛ք, ո՞վ բոլոր ժողովուրդներ,
Ուշադի՛ր եղէք, ո՞վ երկիր եւ անոր բոլոր բնակիչները».
Տէրը՝ Եհովան ձեզի դէմ վկայ ըլլայ,
Տէրը՝ իր սուրբ տաճարէն:
- 3** Արդարեւ ահա՝ *Տէրը իր տեղէն կ'ելլէ,*
Եւ պիտի իշնէ ու երկրի բարձունքներուն վրայ քալէ.
- 4** *Լեռները անոր տակ պիտի հալին*
Եւ հովիտները ճեղքուին՝
Կրակին առջեւ **հալած** մեղրամոմի պէս,
Զառիվայրին վրայ թափուած ջուրի պէս:
- 5** Այս բոլորը պիտի ըլլան Յակոբի յանցանքին համար,
Եւ հսրայէլի տան մեղքերուն համար:
Յակոբի յանցանքին **պատճառը** ո՞վ է, Սամարիա չէ՞։
Ու Յուղայի բարձր տեղերուն **պատճառը** ո՞վ է, Երուսաղէմ չէ՞։
- 6** Ուստի Սամարիան դաշտի մէջ **աւերակի** շեղչի պիտի վերածեմ”,
Այգի տնկելու **տեղի**.
Անոր քարերը ձորին մէջ պիտի գլորեմ,
Եւ անոր հիմերը պիտի յայտնեմ:
- 7** Անոր բոլոր արձանները պիտի փշրուին,
Անոր **տրուած** բոլոր վարձատրութիւնները կրակով պիտի այրուին,
Անոր բոլոր կուռքերը աւերակի պիտի վերածեմ.
Քանի **զանոնք** պոռնիկի վարձատրութեամբ հաւաքեց,
Անոնք պոռնիկի բարձատրութեան պիտի վերածուին”։
- 8** Հետեւաբար պիտի հեծեծեմ ու գոռամ,

^ա **Եբր.**՝ Եհովայի

^բ **Եբր.**՝ Եղաւ

^գ **Եբր.**՝ ինք տեսաւ

^դ **Եբր.**՝ լիութիւնը

^ե **Եբր.**՝ վրայ պիտի դնեմ

^գ **Եբր.**՝ քանդակուած պատկերները

^է **Եբր.**՝ ընեմ

^լ **Կամ** վարձատրութիւն պիտի դառնան

ՄԻՔԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՐԻԹԻՒՆԸ

- ՊԲոպիկ եւ մերկ պիտի շրջիմ.
Ճնագայլերու պէս կոծ պիտի ընեմ, ու ջայլամներու պէս՝ սուգ.
- 9 Որովհետեւ անոր վէրքը մահաբեր է,
Ան մինչեւ Յուղա եկաւ,
Մինչեւ իմ ժողովուրդիս դուռը հասաւ, մինչեւ Երուսաղէմ»:

ԹՇՆԱՄԻՆ ԿԸ ՄՕՏԵՆԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

- 10 «Գէթի մէջ մի՝ պատմէք ու բնա՛ մի՝ լաք.
Ժեթափրայի մէջ՝ թաւալէ՛ փոշիի մէջ.
- 11 Ո՞վ՝ Սակիիրի բնակչուրի, անցի՛ քու ամօթոյքդ բացուած:
Սաանանի բնակչուրին դուրս չ'ելլեր.
- ԽԲեթեսէլի կոծին համար իր ճեցուկը ծեզմէ ես պիտի առնէ:
12 Արդարեւ Մարոթի բնակչուրին բարիքի կը սպասէ,
Բայց չարիք իջաւ Տէրոջմէն՝ մինչեւ Երուսաղէմի դուռը:
- 13 Նժոյգը կառքի՛ն լծէ, ո՞վ Լաքիսի բնակչուրի.
Դուն ես՝ Սիոնի աղջիկին մեղքին սկզբնապատճառը,
Քանի որ քու մէջդ գտնուեցան հսրայէլի յանցանքները:
- 14 Հետեւաբար Մորեսէթ-Գէթի հրաժարումի ընծաներ պիտի տաս.
ԺԱքեզիքի տուները հսրայէլի թագաւորներուն նխարկանք պիտի ըլլան:
- 15 Տակաւին քու վրադ տիրապետող՝ մը պիտի բերեմ, ո՞վ՝ Մարեսայի բնակչուրի.
Հսրայէլի փառքը մինչեւ Ոդողոս պիտի հասնի:
16 Կնտա՛կ եղիր ու մազե՛րդ կտրէ՝ քնքուշ որդիներուդ համար.

բ Կամ՝ թալլուած

ծ Այսինքն՝ Փոշիի տան

հ Այսինքն՝ Գեղեցկութեան

լ Այսինքն՝ Հօտեր ունեցողի

ի Այսինքն՝ Մերձակայ տան, Կամ հցեւանի տան

ծ Եբր.՝ կայանը

կ Այսինքն՝ Դառնութեան

է Եբր.՝ Ա՛ն է

չ Այսինքն՝ Ստութեան

ի Եբր.՝ ստութիւն

է Եբր.՝ քեզի տիրացող

չ Այսինքն՝ Ստացուածքի

լ Եբր.՝ քե՛զ խուզէ

“Շատցո՞ւր կնոռութիւնդ՝ արծիւի պէս,
Քանի որ անոնք քեզմէ **հեռու** տարագրուեցան»:

ԱՂՋԱԾԸ ՏՈՒԱՊԵՑՆՈՂՆԵՐՈՒՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

2

Վայ անոնց, որ անօրէնութիւն կը մտածեն,
Իրենց անկողինին վրայ չարիք կը պատրաստեն,
Եւ առտուան լոյսին **ատենը** զայն կը գործադրեն,
Քանի որ իրենց ձեռքերուն մէջ զօրութիւն կայ:

2 Անոնք արտերու կը ցանկան ու **զանոնը** կը յափշտակեն,
Նաեւ տուներու, եւ **զանոնը** կը բռնագրաւեն.
“Մարդն ու իր տունը,

Մարդը եւ իր ժառանգութիւնը կը հարստահարեն:

3 Հետեւաբար **Տէրը** սա՛ կը յայտարարէ.
«Ահա՛ ես այս գերդաստանին դէմ չարիք մը կը մտածեմ,
Որմէ պիտի **չկարենաք** ձեր վիզը հեռացնել,
Ո՛չ ալ գոռոգութեամբ պիտի քալէք,
Որովհետեւ ժամանակը չար է:

4 Այդ օրը **բեզեզ նշաւակ** պիտի ընեն”,
Ողբալից եղերերգութեամբ պիտի սգան եւ ըսեն.
“Բոլորովին բնաջնջուեցանք.

Իմ ժողովուրդիս բաժինը փոխեց,
Զայն ի՞նչպէս ինձմէ հեռացուց.

Մեր արտերը վերադարձնելու **փոխարէց** բաժնեց□:

5 Հետեւաբար **Տէրոց** համախմբումին մէջ
Ո՛չ մէկը պիտի ունենաս՝ որ վիճակի մը վրայ լար քաշէ:

6 Մարգարէացողներուն **Կ'ըսեն**.

“Մի՛ մարգարէանաք□.

Եթէ անոնց չմարգարէանան, նախատինքը **‘պիտի չհեռանայ’**:

7 Ո՛վ Յակորի տուն **‘կոչուող’**, միթէ **Տէրոց** Հոգին **‘տկարացա՞ւ’**.
Ասո՞նք են անոր արարքները.

Միթէ իմ խօսքերս բարիք չե՞ն ըներ ուղղամտութեամբ ընթացողին:

8 Իմ ժողովուրդս **‘առաջուընէ’** ոտքի ելաւ իբր թշնամի.

⁶ **Եբր.**՝ Ընդարձակէ’

⁷ **Եբր.**՝ Զօրաւոր մարդը

⁸ **Եբր.**՝ ձեր վրայ առակ պիտի հանեն

⁹ **Եբր.**՝ Ետ պիտի չքաշուի

¹⁰ **Եբր.**՝ ըսուող

¹¹ **Եբր.**՝ կարճցա՞ւ

¹² **Եբր.**՝ Երէկուընէ

ՄԻՔԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՌՈՒԹԻՒՆԸ

- Երբ պատերազմէն վերադառնող ները ապահովութեամբ անցնին,
Հանդերձներուն է վրայէն պատմուճանը կը կողոպտէք:
- 9 Իմ ժողովուրդիս կիները իրենց վայելած տուներէն կը վոնտէք.
Անոնց երախաներէն իմ փառաւորութիւնս կ'առնէք յաւիտենապէս:
- 10 Կանգնեցէք ու գացէք,
Թանի որ ասիկա հանգստավայր չէ.
Դիդժ ըլլալուն պատճառով՝
Մեծ էկործանումով պիտի բնաջնջուի:
- 11 Եթէ հովի ու կեղծիքի մէջէն ընթացող մարդ մը
Ստէ՝ ըսելով.
“Գինիի եւ օղիի համար քեզի պիտի մարգարէանամ□,
Անիկա՝ պիտի ըլլայ այս ժողովուրդին մարգարէն:
- 12 Ո՞վ Յակոբ, ձեզ բոլորդ անշուշտ պիտի հաւաքեմ.
Իսրայէլի մնացորդը պիտի հաւաքեմ,
Բոսրայի ոչխարներուն պէս թպիտի մէկտեղեմ”,
Իրենց արօտավայրին մէջ եղող հօտերուն պէս.
Մարդոց բազմութեան համար դղրդիւն պիտի ըլլայ:
- 13 Խրամատ բացողը անոնց առջեւէն բարձրացաւ.
Անոնք խրամատ բացին, դոնէն անցան եւ անկէ դուրս ելան:
Անոնց թագաւորը անոնց առջեւ անցած է,
Ու Տէրը անոնց գլուխն է»:

ՄԻՔԻԱՅԻ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՍՐԱՅԵԼԻ ԻՇԽԱՆՆԵՐՈՒՆ

3

- Ես ըսի. «Այժմ մտի՞կ ըրէք, ո՞վ Յակոբի գլխաւորները,
Եւ դո՛ւք, Իսրայէլի տան մեծաւորները.
Պարտաւոր չէ՞ք իրաւունքը ճանչնալ,
- 2 Դո՛ւք՝ որ բարիքը կ'ատէք ու չարիքը կը սիրէք,
“Մարդոց վրայէն իրենց մորթը կը թխէք, եւ անոնց ոսկորներուն վրայէն՝ իրենց միսը.
- 3 Նաեւ իմ ժողովուրդիս միսը կ'ուտէք,
Եւ անոնց վրայէն իրենց մորթը կը հանէք»:
Անոնց ոսկորները կը կոտրտեն,
Զանոնք կը կտրատեն կաթսայի մէջ ու եփարանի մէջ եփուելիք միսի պէս:
- 4 Ուստի Տէրոց պիտի աղաղակեն,
Բայց անոնց պիտի չպատասխանէ.
Այդ ատեն իր երեսը անոնցմէ պիտի ծածկէ,
Որովհետեւ անոնք չարիք գործեցին իրենց արարքներով:

^է Կամ՝ հետ

^բ Եբր.՝ Երկունքով

^թ Եբր.՝ միասին պիտի դնեմ

^ա Եբր.՝ Անոնց

^բ Եբր.՝ յափշտակէք

ՄԻՔԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՌՈՒԹԻՒՆԸ

- 5 Տէրը սա՛ կը յայտարարէ այն մարգարէներուն մասին՝
Որոնք իմ ժողովուրդս կը մոլորեցնեն.
«Երբ իրենց ակուներով **բան մը** խածնեն՝
Խաղաղութիւն կը յայտարարեն,
Սակայն ո՛վ որ իրենց բերանը **բան չդնէ**՝
Անոր դէմ պատերազմ կը պատրաստեն:
- 6 Հետեւաբար գիշեր պիտի ունենաք
Առանց տեսիլքի,
Դիսաւար պիտի ունենաք”
Առանց դիւթութեան.
Արեւը մայր պիտի մտնէ մարգարէներուն վրայ,
Օրը պիտի խաւարի անոնց վրայ:
- 7 Տեսանողները պիտի ամչնան,
Դիւթերը պիտի շիկնին.
Բոլորն ալ իրենց պեխը պիտի ծածկեն,
Որովհետեւ Աստուծմէ պատասխան մը պիտի չըլլայ»:
- 8 **Բայց Տէրոց Հոգիով՝**
Ես լեցուած եմ կարողութեամբ, ^եարդարութեամբ ու քաջութեամբ,
Որպէսզի Յակոբի յայտնեմ իր յանցանքը,
Եւ հսրայէլի՝ իր մեղքը:
- 9 Այժմ սա՛ մտիկ ըրէք,
Ո՛վ Յակոբի տան գլխաւորները
Եւ հսրայէլի տան մեծաւորները,
Դուք որ կը գարշիք իրաւունքն,
Կը ծռէք ամէն ինչ որ ուղիղ է,
- 10 **Արիւններով կը կառուցանէք Սիոնը,**
Եւ անիրաւութեամբ՝ Երուսաղէմը:
- 11 Անոր գլխաւորները կաշառքով կը դատեն,
Անոր քահանաները ^գվճարումով կը սորվեցնեն,
Անոր մարգարէները դրամով կը դիւթեն,
Ու **Տէրոց հկ'ապաւինին՝ ըսելով.**
«Միթէ Տէրը մեր մէջ չէ՞».
Մեր վրայ չարիք պիտի չգայ»:
- 12 Ուրեմն ձեր պատճառով Սիոն արտի **պէս** պիտի հերկուի,
Երուսաղէմ **աւերակի** շեղջ պիտի ըլլայ,
Եւ ^բտաճարին լեռը՝ անտառի բարձունքներուն **պէս**:

^գ **Երբ.**՝ սրբացնեն

^դ **Երբ.**՝ Պիտի մթագնի

^ե **Երբ.**՝ իրաւունքով

^գ **Երբ.**՝ գինով

^է **Երբ.**՝ կը կոթնին

^լ **Երբ.**՝ **Տէրոց** տան

ՏԵՐՈՉ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

4

Բայց վերջին օրերը Տէրոջ տան լեռը՝
Լեռներուն գագաթը պիտի հաստատով,
Բլուրներէն վեր պիտի բարձրանայ,
Ու ժողովուրդները “հոն պիտի խուժեն”:

2 Շատ ազգեր պիտի երթան եւ ըսեն.

«Եկէք, ելլենք Եհովայի լեռը,
Ճակորի Աստուծոյն տունը,
Որպէսզի մեզի սորվեցնէ իր ճամբաները
Եւ քալենք անոր ուղիներուն մէջ»:
Արդարեւ օրէնքը Սիոնէն պիտի ելլէ,
Ու Տէրոջ խօսքը՝ Երուսաղէմէն.

3 Անիկա շատ ժողովուրդներու մէջ պիտի դատէ,

Հզօր ազգերը՝ մինչեւ հեռաւոր տեղերը՝ պիտի յանդիմանէ:
Ու անոնք իրենց սուրերէն խոփեր պիտի դարբնեն,
Եւ իրենց նիզակներէն՝ յօսոցներ։
Ազգ ազգի վրայ սուր պիտի չվերցնէ,
Եւ ա՛լ պատերազմիլ պիտի չսորվին.

4 Հապա իւրաքանչիւրը պիտի նստի իր որթատունկին տակ
Ու իր թզենիին տակ,
Եւ ո՛չ մէկը **զինք** պիտի դողացնէ.

Որովհետեւ զօրքերու Տէրոջ բերանը խօսեցաւ:

5 Արդարեւ բոլոր ժողովուրդներէն
Իւրաքանչիւրը իր աստուծոյն անունով կ'ընթանայ,
Բայց մենք **բդարէ** դար՝
Տէրոջ՝ մեր Աստուծոյն անունով պիտի ընթանանք։

ԻՍՐԱՅԵԼ ՊԻՏԻ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ ԱՔՍՈՐԷՆ

6 «Այդ օրը, – կը պատգամէ Տէրը, – կաղը պիտի հաւաքեմ,
Աքսորուածը պիտի հաւաքեմ,
Նաեւ ան՝ որ տրտմեցուցի»։

7 Կաղը՝ մնացորդ պիտի ընեմ,
Հեռուն վոնտուածը՝ հզօր ազգ։
Տէրը Սիոն լերան վրայ պիտի թագաւորէ անոնց վրայ,
Հիմա եւ յաւիտեան»։

8 Իսկ դո՛ւն, ո՛վ հօտի աշտարակ, Սիոնի աղջիկին բլուրը,
Քեզի պիտի գայ,

^ա Եբր.՝ **գետի պէս** անոր քով պիտի հոսին

^բ Եբր.՝ յաւիտենականութենէ յաւիտենականութիւն

^գ Եբր.՝ որուն չարիք ըրի

ՄԻՔԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

- Քեզի** պիտի հասնի նախկին տէրութիւնը,
Ու երուսաղէմի աղջիկին՝ թագաւորութիւնը:
- 9** Հիմա ինչո՞ւ կը գոչես,
Միթէ քու մէջդ թագաւոր չկա՞յ.
Կամ քու խորհրդականդ կորսուեցա՞ւ,
Որ քեզ ծննդաբերող կնո՞ց պէս երկունքի ցալը համակեց:
10 Երկունքի ցա՞ւ քաշէ ու ծննդաբերող կնո՞ց պէս "հառաշէ՛", ո՞վ Սիոնի աղջիկ,
Քանի որ հիմա քաղաքէն պիտի ելլես
Եւ դաշտի մէջ պիտի բնակիս,
Ու մինչեւ Բաբելոն պիտի երթաս
Եւ հոն պիտի ազատիս.
Հոն Տէրը քեզ պիտի փրկէ քու թշնամիներուդ ձեռքէն:
11 Հիմա քեզի դէմ շատ ազգեր հաւաքուեցան, որոնք կ'ըսեն.
«Ան թող պղծուի,
Ու մեր աչքերը Սիոնը թող տեսնեն»:
12 Բայց անոնք Տէրոց մտածումները չեն գիտեր,
Եւ անոր ծրագիրը չեն հասկնար,
Քանի որ ի՞նք զանոնք կը հաւաքէ՛ ինչպէս որաները կալին մէջ կը հաւաքուին:
13 Կանգնէ՛ ու ծեծէ՛ կալը, ո՞վ Սիոնի աղջիկ,
Որովհետեւ քու եղջիւրդ երկաթի պիտի վերածեմ",
Քու կճակներդ պղինձի պիտի վերածեմ,
Ու շատ ժողովուրդներ պիտի ճգմես:
Անոնց վաստակը Եհովայի պիտի նուիրեմ,
Եւ անոնց գոյքերը՝ ամբողջ երկրի Տէրոց:

5

Հիմա "գունդե՛րդ հաւաքէ", ո՞վ գունդի աղջիկ.

Ունգ պաշարած են":

Գաւազանով պիտի զարնեն հսրայէլի դատաւորին այտին:

ՏԷՐԸ ՓՐԿԻՉ ՄԸ ԿԸ ԽՈՍԱՆԱՅ ԲԵԹԼԵՀԵՄԻ

- 2** Իսկ դուն, ո՞վ Բեթլեհէմ Եփրաթա,
Թէպէտ Յուտայի հազարաւորներուն մէջ փոքր ես,
Քեզմէ՛ պիտի ելլէ ինծի համար ա՛ն՝ որ հսրայէլի վրայ կառավարիչ պիտի ըլլայ.
Անոր ծագումը վաղեմի, յաւիտենական օրերէն է:
3 Հետեւաբար ան պիտի գլք զանոնք

^a Եբր.՝ խոյացի՛ր

^b Եբր.՝ Երկաթէ պիտի ընեմ

^c Եբր.՝ խմբաւորուէ՛

^d Եբր.՝ Մեզի դէմ պաշարում դրած է

^e Եբր.՝ մատնէ

ՄԻՔԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՐԻԹԻՒՆԸ

Մինչեւ ՞ծնանողին ծնանելու ատենը,
Յետոյ անոր եղբայրներուն մնացորդը
հսրայէլի որդիներուն պիտի վերադառնայ:
4 Ան պիտի գոյատեւէ ու պիտի հովուէ Տէրոց զօրութեամբ,
Տէրոց՝ իր Աստուծոյն անունին մեծափառութեամբ.
Եւ անոնք ապահովութեամբ պիտի բնակին,
Որովհետեւ ան արդէն մինչեւ երկրի ծայրերը պիտի մեծնայ:

ԱԶԱՏՈՒՄ ԵՒ ՊԱՏԻԺ

- 5 Ան պիտի գրերէ խաղաղութիւնը:
Երբ Ասորեստանցին մեր երկիրը մտնէ
Ու մեր պալատները ոտնակոխ ընէ,
Անոր դէմ եօթը հովիւ
Եւ ութէ նախարար ոտքի պիտի հանենք:
6 Անոնք սուրի ճարակ պիտի ընեն Ասորեստանի երկիրը,
Ու Նեբրովթի երկիրը՝ իր դռներուն մէջ:
Ան մեզ պիտի ազատէ Ասորեստանցիէն,
Երբ ան մեր երկիրը մտնէ
Եւ մեր հողամասը ոտնակոխ ընէ:
7 Յակոբի մնացորդը շատ ժողովուրդներու մէջ
Տէրոցմէն եկող ցողի պէս պիտի ըլլայ,
Տարափի պէս՝ որ բոյսի վրայ Կ'իշնէ,
Որ մարդէն ոչինչ կ'ակնկալէ”,
Ու մարդու որդիներէն ոչինչ կը յուսայ:
8 Յակոբի մնացորդը ազգերուն մէջ,
Շատ ժողովուրդներու մէջ այնպէս պիտի ըլլայ,
Ինչպէս առիւծ մը՝ անտառի գազաններուն մէջ,
Կամ առիւծի կորիւն մը՝ ոչխարներու հօտերուն մէջ.
Ան եթէ անցնի՝ կը կոխկոտէ ու կը բզքտէ,
Եւ ո՛չ մէկը կրնայ ազատել:
9 Քու ձեռքդ հակառակորդներուդ վրայ պիտի բարձրանայ,
Ու բոլոր թշնամիներդ պիտի բնաջնջուին:
10 «Այդ օրը, – կը պատգամէ Տէրը, –
Զիերդ քու մէջէդ պիտի բնաջնջեմ,
Եւ կառքերդ պիտի կորսնցնեմ.
11 Քու երկրիդ քաղաքները պիտի կործանեմ,

^Դ Այսինքն՝ ծնանող կնոց

^Ե Կամ կենայ, կամ տեղաւորուի

^Գ Եբր.՝ ըլլայ

^Դ Եբր.՝ օծեալ մարդ

^Ե Եբր.՝ չ'ակնկալեր

ՄԻԹԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

- Ու բոլոր ամրոցներդ պիտի փլցնեմ.
12 Թու ծեռքէդ կախարդութիւնները պիտի փճացնեմ,
Եւ ո՛չ մէկ գուշակ պիտի ունենաս:
13 Թու մէջէդ ՞կուռքներդ
Ու արձաններդ պիտի կոտրտեմ,
Եւ ա՛ ծեռքներուդ գործերուն պիտի չերկրպագես:
14 Թու մէջէդ աստարովթները պիտի խլեմ,
Ու քաղաքներդ պիտի կործանեմ:
15 **Ի՞նձի չհնազանդող ազգերէն**
Բարկութեամբ եւ ցասումով վրէժ պիտի առնեմ»:

ՏԵՐՈՉ ԴԱՏԸ ԻՍՐԱՅԵԼԻ ՀԵՏ

6

- Ուրեմն մտի՛կ ըրէք ինչ որ Տէրը կը յայտարարէ.
«Կանգնէ՛ ու դա՛տ վարէ լեռներուն առջեւ,
Բլուրները քու ձայնդ թող լսեն»:
2 Մտի՛կ ըրէք Տէրոց վէճը, ո՛վ լեռներ,
Նաեւ դո՛ք, երկրի տոկուն հիմները,
Քանի որ Տէրը իր ժողովուրդին հետ վէճ ունի,
Եւ սիրայէլի հետ դատ պիտի վարէ:
3 «Ո՛վ իմ ժողովուրդս, քեզի ի՞նչ ըրի,
Ի՞նչպէս քեզ հիւծեցի.
Պատասխանէ՛ ինձի:
4 Արդարեւ ե՛ս քեզ Եգիպտոսի երկրէն բարձրացուցի,
Ստրկութեան տունէն քեզ փրկեցի,
Եւ առջեւէդ Մովսէսը, Ահարոնն ու Մարիամը ղրկեցի:
5 Ո՛վ իմ ժողովուրդս, այժմ յիշէ՛
Ինչ որ Մովաբացիներու Բաղակ թագաւորը կը ծրագրէր,
Ինչ որ Բէովրեան Բաղաամ անոր պատասխանեց,
Եւ ինչ որ Եղաւ Սատիմէն մինչեւ Գաղգաղա,
Որպէսզի Տէրոց արդարութիւնը գիտնաս»:

ՏԵՐԸ Ի՞ՆՉ ԿԸ ՊԱՀԱՆՁԵ

- 6 «Տէրոց առջեւ ինչո՞վ ներկայանամ,
Եւ Ամենաբարձր Աստուծոյ առջեւ կը իմ.
Արդեօք անոր առջեւ ներկայանա՞մ ողջակէզներով,
Մէկ տարեկան հորթերով:

բ Եբր.՝ քանդակուած պատկերները

գ Կամ՝ հեթանոսներէն

ա Եբր.՝ հսրայէլը պիտի յանդիմանէ

բ Եբր.՝ բարձր

ՄԻԹԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՌՈՒԹԻՒՆԸ

- 7 Արդեօք Տէրը պիտի հաւանի՞ հազարաւոր խոյերու,
Կամ բիւրաւոր իւղի վտակներու.
Արդեօք իմ յանցանքիս համար իմ անդրանի՞կս տամ,
Եւ անձիս մեղքին համար՝ «ընդերքիս պտո՞ւղը»:
- 8 Ինք քեզի յայտնեց, ո՞վ մարդ, թէ ի՞նչ է ո՞հաճելին,
Թէ Տէրը ի՞նչ կը պահանջէ քեզմէ...
Միայն գործադրել իրաւունքը, սիրել կարեկցութիւնը
Ու խոնարհութեամբ ընթանալ քու Աստուծոյդ հետ:
- 9 Տէրոց ձայնը քաղաքին կը գոչէ,
Եւ խոհեմը քու անունիդ ուշադրութիւն պիտի դարձնէ».
«Մտի՞կ ըրէք գաւազանին, ու զայն սահմանողին:
- 10 Ամբարիշտին տան մէջ տակաւին ամբարշտութեան գանձեր կա՞ն,
Ու պակաս արդու՝ որ գարշելի է:
- 11 Միթէ ամբարշտութեան կշիռը
Ու խարդախուած կշռաքարերու տոպրակ **ունեցողը** մաքո՞ւր պիտի սեպեմ:
- 12 Արդարեւ անոր հարուստները բռնութեամբ լեցուն են,
Անոր բնակիչները սուտ կը խօսին
Եւ իրենց բերանին մէջ խարեբայ լեզու ունին:
- 13 Ուստի ես ալ քեզ զարնելով պիտի հիւանդացնեմ,
Քու մեղքերուդ համար **քեզ** պիտի ամայացնեմ:
- 14 Դուն պիտի ուտես, սակայն պիտի չկշտանաս.
Քու էանօթութիւնդ ներսդ պիտի ըլլայ:
Պիտի տեղափոխես, բայց պիտի **չկարենաս** ազատել.
Իսկ ինչ որ ազատես՝ սուլի պիտի մատնեմ:
- 15 Դուն պիտի սերմանես, բայց պիտի չհնձես.
Զիթապտուդ պիտի կոխես, բայց **հոտաւէտ** իւղով պիտի չօծուիս.
Քաղցու պիտի **պատրաստես**, բայց գինի պիտի չխմես:
- 16 Արդարեւ Ամրիի հրամանները կը պահուին,
Նաեւ Աքաաբի տան բոլոր արարքները.
Դուք անոնց խորհուրդներուն համաձայն կ'ընթանաք,
Որպէսզի քեզ ամայի դարձնեմ,
Ու **բնակիչներդ՝ սուլոցի ենթակայ.**
Ուստի իմ ժողովուրդիս նախատինքը պիտի կրէք»:

ԻՍՐԱՅԵԼԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՆԿՈՒՆԸ

^a **Եբր.**՝ փորիս

^b **Եբր.**՝ լաւը

^c **Եբր.**՝ պիտի տեսնէ

^d **Եբր.**՝ բանադրանքի **արժանի**

^e **Կամ՝** ուժասպառութիւնդ

^f **Եբր.**՝ անոր բնակիչները

7

Վայ ինծի, որովհետեւ ամառնային պտուղի քաղին պէս եմ,
Այգեկութին **յաջորդող** ճռաքաղին պէս.

Ուտելու ո՞չ մէկ ողկոյզ կայ.

Անձս կամսահաս **պտուղմերու** կը փափաքի:

2 Բարեպաշտը երկրէն կորսուեցաւ,

Մարդոց մէջ ուղիղ մէկը չկայ.

Բոլորը արիւն **թափելու** համար դարան կը մտնեն,

Իրաքանչիւրը իր եղբայրը ուռկանով կ'որսայ:

3 Զարիքի համար իրենց ծեռքերը **պատրաստ են**.

Բարիք ընելու համար իշխանաւորը **պարգև** կը պահանջէ,

Եւ դատաւորը **շկաշառք կ'ակնկալէ**.

Մեծ **մարդը** իր անձին եղենագործութիւնը կ'արտայայտէ.

Այսպէս՝ իրաւունքը կը ծունեն:

4 Անոնց լաւագոյնը փուշի պէս է,

Ամենէն ուղիղը **փուշէ շրջափակէն գէշ է**.

Թու դէտերուդ ծանուցանած օրը՝ քու **պատիժութիւն** եկաւ,

Անոնց շփոթութիւնը հիմա պիտի ըլլայ:

5 Բարեկամի մի՛ հաւատաք,

Մտերիմի մի՛ վստահիք,

Ծոցդ պառկող **կնոք առջեւ** պահպանէ՛ք բերանիդ դռները.

6 Որովհետեւ որդին իր հայրը կ'անարգէ,

Աղջիկը իր մօր դէմ կը կանգնի, **ու հարսը՝ իր կեսուրին դէմ**.

Մարդուն **թշնամիները** իր Դնտանիքն են:

7 Բայց ես **Տէրոց պիտի նսպասեմ**,

Իմ փրկութեանս Աստուծոյն պիտի յուսամ.

Իմ Աստուածս ինծի մտիկ պիտի ընէ:

ՏԷՐԸ ՓՐԿՈՒԹԻՒՆ ԿԸ ԲԵՐԵ

8 Ո՞վ իմ **թշնամիս**, մի՛ ուրախանար ինծի համար.

Թէեւ իյնամ՝ պիտի կանգնիմ,

Թէեւ խաւարի մէջ բնակիմ՝ **Տէրը ինծի լոյս պիտի ըլլայ**:

9 **Տէրոց բարկութիւնը** պիտի կրեմ,

(**Քանի անոր դէմ մեղանչեցի**,)

Մինչեւ որ ան իմ իրաւունքս պաշտպանէ եւ **դատավճիռս արձակէ**".

^ա **Եբր.**՝ հատուցում

^բ **Եբր.**՝ զայն

^գ **Եբր.**՝ հատուցումդ

^դ **Եբր.**՝ ընտանիքին մարդիկն

^ե **Եբր.**՝ դիտեմ

^գ **Եբր.**՝ դատաստանս կիրարկէ

ՄԻՔԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

Ան զիս դուրս պիտի հանէ՝ դէպի լոյսը, **եւ** իր արդարութիւնը պիտի տեսնեմ:

10 Այն ատեն իմ թշնամիս պիտի տեսնէ.

Ամօթը պիտի ծածկէ ա՛ն՝ որ ինձի կ'ըսէր.

«Ո՞ւր է Տէրը՝ քու Աստուածդ»:

Իմ աչքերս պիտի դիտեն զինը.

Արդէն պիտի կոխկոտուի՝ փողոցներու ցեխին պէս:

11 Այն օրը երբ քու պատերդ կառուցանուին,

Նոյն օրը **քու** սահմաններդ պիտի հեռացուին:

12 Այդ օրը քեզի պիտի գան

Ասորեստանէն ու Եգիպտոսի քաղաքներէն,

Եգիպտոսէն մինչեւ Գետը,

Եւ ծովէ ծով ու լեռնէ լեռ:

13 Սակայն բերկիրը ամայի պիտի ըլլայ իր բնակիչներուն պատճառով,

Իբր պտուղ իրենց արարքներուն:

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԿԱՐԵԿՑԻ ԻՍՐԱՅԵԼԻ

14 Քու գաւազանովդ հովուէ՛ քու ժողովուրդդ,

Քու ժառանգութեանդ հօտը,

Որ անտառին մէջ միայնակ կը բնակի՝ Կարմեղոսի մէջ.

Անոնք Բասանի ու Գաղաադի մէջ թող արածին՝

ՀՀին օրերուն պէս:

15 Սքանչելիքներ ցոյց պիտի տամ անոր,

Ինչպէս այն օրերը՝ երբ Եգիպտոսի երկրէն դուրս ելար:

16 Ազգերը պիտի տեսնեն եւ ամշնան՝

Նկատելով իրենց ամբողջ զօրութիւնը.

Իրենց բերանին վրայ ձեռք պիտի դնեն,

Իրենց ականջները պիտի խլանան:

17 Օծի պէս հող պիտի լգեն.

Երկրի սողուններուն պէս

Իրենց ամրափակ տեղերէն դուրս պիտի գան՝ հողալով.

Երկիւլով պիտի **քան** Տէրոց՝ մեր Աստուծոյն,

Ու քեզմէ պիտի վախնան:

^է **Կամ** պարսպապատ

^զ **Կամ** պատնէշէն

^բ **Կամ** հողերը

^ժ **Կամ** այգիներու

^ի **Եբր.**՝ Հնադարեան

^լ **Կամ** փոշի

^{իւ} **Եբր.**՝ Վրդովելով

ՄԻՔԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՌԻԹԻՒՆԸ

- 18 Զեզի պէս Աստուած ո՞վ կայ,
Որ անօրէնութիւնը կը ներէ,
Եւ իր ժառանգութեան մնացորդին յանցանքը կ'անտեսէ.
Իր բարկութեան յաւերժ չի կառչիր,
Թանի որ կարեկցութենէն կ'ախորժի:
- 19 Ան պիտի վերադառնայ, մեզի պիտի գթայ,
Մեր անօրէնութիւնները ^{ծոտնակոյն} պիտի ընէ":
Այո՛, անոնց բոլոր մեղքերը
Ծովուն խորխորատին մէջ պիտի նետես:
- 20 Յակոբի ^{հաւատարմութիւն} **ցոյց** պիտի տաս,
Եւ Աբրահամի՝ կարեկցութիւն,
Ինչպէս մեր հայրերուն երդումով խոստացար
Վաղեմի օրերէն ի վեր:

^ծ **Եբր.**՝ պիտի նուաճէ

^կ **Եբր.**՝ ճշմարտութիւն